«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ

"YEREVANI AVTOBUS" CJSC

ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 5, 0076
5 Tevosyan, 0076, Yerevan, RA

Հեռ./Tel.: (374 11) 67 44 20
էլ.փոստ/E-mail: yerevani.avtobus@gmail.com

ՈԵԼ 261-Կ «04» 04 2022թ.

«ԴՐԱՅՎ-ԿՈԴ» ՍՊԸ-Ի (ՀՎՀՀ՝ 02255477) ՏՆՕՐԵՆ՝
պարոն Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ փ./շ/59/3

Հարգելի պարոն Ալեքսանյան

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «ԴՐԱՅՎ-ԿՈԴ» ՍՊԸ-ի միջև 2021թ.-ի օգոստոսի 26-ին կնքված N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8-3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԴՐԱՅՎ-ԿՈԴ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ ավտոպահեստամասեր, սակայն Պայմանագրով նախատեսված ապրանքներն ամբողջությամբ չեն մատակարարվել «ԴՐԱՅՎ-ԿՈԴ» ՍՊԸ-ի կողմից:

Հաշվի առնելով, որ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն՝ ընդառաջ գնալով «ԴՐԱՅՎ-ԿՈԴ» ՍՊԸ-ին, 10.03.22թ. N 191-ել գրությամբ հնարավորություն էր տվել վերջինիս մինչև 31.03.2022թ.-ը ամբողջությամբ կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, սակայն Պայմանագրի 1-ին,3-րդ,4-րդ,5-րդ,8-րդ,16-դ և 17-րդ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքներն առ այսօր չեն մատակարարվել ընդհանրապես, իսկ 13-րդ չափաբաժինը մատակարարվել է ոչ ամբողջապես, և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ»

ՓԲԸ-ն 2022թ. ապրիլի 4-ից միակողմանիորեն մասնակի լուծել է N ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-21/8-3 գնման պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ընկերությունից կգանձվի պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 173,916 (հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր տասնվեց) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովումը՝ 260,874(երկու հարյուր վաթսուն հազար ութ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամի չափով:

ՏՆՕՐԵՆ՝ ԷԼԲԱԿ ԹԱՐՓՈՇՅԱՆ

Կատարող՝ ՊՍ ղեկավար
Ա. Մանուկյան